Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի
սեպտեմբերի 15-ի № 202 Ա որոշմամբ

«ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության կողմից ռադիոկապի ցանցի (ամրակցված) կազմակերպման համար 463,975/453,975ՄՀց, 465,225/455,225ՄՀց, 466,475/456,475ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման

Պայմանները

(Թույլտվություն N 0019, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006թ. սեպտեմբերի 15-ի №202Ա որոշմամբ)

1. Սահմանումներ

Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

Լիցենզավորված անձ՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Թույլտվություն ստացած անձ: Սույն թույլտվության իմաստով Լիցենզավորված անձ է հանդիսանում «ԱրմենՏել» ՓԲԸ-ն.

Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթ, որը հավաստում է ռադիոհաճախականությունների որոշակի հատված օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.

Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2.1 Սույն Թույլտվությունը ուժի մեջ է մտնում 2006 թվականի սեպտեմբերի 15-ից:

2.2 Սույն Թույլտվությունը գործում է մինչև 2013 թվականի մարտի 3-ը:

3. Ռադիոհաճախականությունների օգտագործման պայմանները

3.1 Թույլտվությունը ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում տեղադրել և շահագործել ռադիոկապի ցանց (ամրակցված), հետևյալ տեխնիկական պայմաններով՝

ա) Ռադիոհաճախականությունների օգտագործման նպատակը՝ ամրակցված հիմնական հեռախոսային ծառայությունների մատուցում:

բ) Ռադիոցանցի օգտագործման տարածքը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Շիրակի,Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր:

գ) Օգտագործվող տեխնոլոգիայի անվանումը՝ CDMA:

դ) Բազային ռադիոկայանների քանակը՝ 25:

ե) Բազային ռադիոկայանների տեղադրման վայրերը՝

Բազային կայանի հերթա-կան համարը	Բազային կայանների տեղադրման վայրերը
1	Էջմիածին
2	Մեծամոր
3	Արմավիր
4	Բաղրամյան
5	Մասիս
6	Արևշատ
7	Արտաշատ
8	Վեդի
9	Արմաշ
10	Աշոցք

11	Ամասիա
12	Գյումրի
13	Ալագյազ
14	Գեղաձոր
15	Ծովակ
16	Լանջիկ
17	Արեգ (Թալին)
18	Ապարան
19	Արայի
20	Եղվարդ
21	Աբովյան
22	Գավառ
23	Մարտունի
24	Հրազդան
25	Ծաղկաձոր

է) Հատկացված ռադիոհաճախականությունները (հաղորդման/ընդունման)՝

(3 x 1,25)՝ 463,975/453,975ՄՀg, 465,225 /455,225ՄՀg, 466,475/456,475ՄՀg :

ը) Ճառագայթման դասը՝ 1M25G1D :

թ) Անտենայի տեսակը (հաղորդիչ/ընդունիչ)՝ պանելային / DB654DG90A :

ժ) Անտենայի բարձրությունը երկրի մակերեսից և ճառագայթման ազիմուտը՝

Բազային կայանի հերթա-կան համարը	Բազային կայանների տեղադրման վայրերը	Անտենայի բարձրու-թյունը երկրի մակերեսից (մետր)	Ճառագայթ-ման ազիմուտը (աստիճան)	Անտենայի ուժեղաց-ման գործակից ը (դԲ)	Լրացուցիչ պահանջ
1	Էջմիածին	34	130 / 230 / 340	14,5	սամանափա-կել ճառագայ-թումը ՀԱԷԿ-ի

					ուղղությամբ
2	Մեծամոր	30	90 / 210 / 330	14,5	սամանափա-կել ճառագայ-թումը ՀԱԷԿ-ի ուղղությամբ
3	Արմավիր	30	40 / 160 / 280	14,5	
4	Բաղրամյան	27	90 / 210 / 320	14,5	
5	Մասիս	25	90 / 210 / 330	14,5	
6	Արևշատ	25	50 / 150 / 310	14,5	
7	Արտաշատ	35	90 / 210 / 330	14,5	
8	Վեդի	40	80 / 210 / 330	14,5	
9	Արմաշ	18	90 / 210 / 330	14,5	
10	Աշոցք	20	60 / 180 / 300	14,5	
11	Ամասիա	100	60 / 180 / 310	14,5	
12	Գյումրի	100	30 / 150 / 270	14,5	
13	Ալագյազ	25	90 / 200 / 300	14,5	
14	Գեղաձոր	40	90 / 250 / 350	14,5	
15	Ծովակ	25	100/ 210/330	14,5	
16	Լանջիկ	24	0 / 120 / 240	14,5	
17	Արեգ	70	0 / 120 /	14,5	

	(Թալին)		**240**		
18	**Ապարան**	**33**	**60 / 160 / 320**	**14,5**	
19	**Արայի**	**27**	**40 / 240 / 320**	**14,5**	
20	**Եղվարդ**	**27**	**0 / 120 / 240**	**14,5**	
21	**Աբովյան**	**22**	**0 / 120 / 240**	**14,5**	
22	**Գավառ**	**52**	**110 / 200/ 330**	**14,5**	
23	**Մարտունի**	**52**	**70 / 240 / 330**	**14,5**	
24	**Հրազդան**	**27**	**50 / 190 / 320**	**14,5**	
25	**Ծաղկաձոր**	**8**	**100/ 190/280**	**14,5**	

ժա) Ռադիոցանցում օգտագործվող բաժանորդային ռադիոկայանների քանակը՝ 10000:

3.2 Թույլտվությունն ուժի մտնելու պահից մեկ տարի հետո՝ մինչև Թույլտվության գործողության ժամկետի ավարտը, հանձնաժողովի կողմից երեք (3 x 1,25) հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների քանակը նվազեցնելու որոշում ընդունելու դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է 180 օրվա ընթացքում (եթե Հանձնաժողովի որոշմամբ ավելի երկար ժամկետ չի նախատեսված) սահմանափակել օգտագործվող ռադիոհաճախականությունների քանակը մինչև երկուսը (2 x 1,25):

3.3 Լիցենզավորված անձը յուրաքանչյուր բազային կայանը շահագործման ընդունելուց հետո, եռօրյա ժամկետում պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել բազային կայանների տեխնիկական տվյալները (ռադիոկայանի մակնիշը, հզորությունը, ռադիոհաճախականությունները ընդունման/հաղորդման, ճառագայթման դասերը, ռադիոկապի կայանի տեղադրման վայրը և աշխարհագրական կոորդինատները, ընդունիչի տեսակը և զգայունությունը, անտենայի տեսակը, ուժեղացման գործակիցը, անտենայի դիագրամի ողղվածության լայնությունը, մեկ կրող ռադիոհաճախականության վրա ինֆորմացիոն (ստանդարտ հեռախոսային) կապուղիների քանակը:

3.4 Լիցենզավորված անձը կիսամյակը մեկ անգամ պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել յուրաքանչյուր բազային կայանի կողմից սպասարկվող բնակավայրերի ցանկը:

3.5 Լիցենզավորված անձը պարտավոր է տեղադրել և շահագործել սերտիֆիկացված սարքավորումներ:

3.6 Լիցենզավորված անձը պարտավոր է սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները և եռամսյակը մեկ Հանձնաժողով ներկայացնել ռադիոհաճախականությունների օգտագործման համար սահմանված ամենամյա վճարման մեկ քառորդը հավաստիացնող անդորրագիրը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրը:

3.7 Հանձնաժողովը իրավասու է տեխնիկական հնարավորության դեպքում բավարարելու երրորդ անձի ներկայացրած՝ Թույլտվությամբ Լիցենզավորված անձին տրամադրված սահմանափակ ռեսուրսի համատեղ օգտագործման վերաբերյալ դիմումը:

3.8 Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին և Թույլտվության պայմաններին:

3.9 Լիցենզավորված անձն անմիջապես Հանձնաժողով է հայտնում սույն Թույլտվության պայմանների խախտումների, ինչպես նաև խախտումների հանգեցնող հանգամանքների մասին:

3.10 Իրավասու մարմինների կողմից իրականացվող վերահսկողության ընթացքում արձանագրված խախտումների մասին Լիցենզավորված անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին:

3.11 Լիցենզավորված անձը պարտավոր է ներկայացնել թույլատրված ռադիոհաճախականությունների օգտագործմանն առնչվող ցանկացած տեղեկություն, որը կպահանջի Հանձնաժողովն իր կողմից սահմանված ժամկետներում և ձևերին համապատասխան:

3.12 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած հաշվետվության և այլ տեղեկատվության հավաստիության համար:

3.13 Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

3.14 Թույլտվության գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

3.15 Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը ապահովել ռադիոծածկույթ Հայաստանի Հանրապետության մոտ 380 գյուղերում համաձայն Թույլտվության հավելվածի և Լիցենզավորված անձի կողմից հանձնաժողով ներկայացված տեխնիկական նախագծերի՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

3.16 Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել հատկացված ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ օգտագործումը:

3.17 Լիցենզավորված անձը պարտավոր է CDMA տեխնոլոգիայի կիրառմամբ ամրակցված հիմնական հեռախոսային ծառայություններ մատուցելու դեպքում հեռախոսագծի տեղադրման սակագնի սահմաններում տեղադրել նաև վերջնակետային սարքավորումը կամ տեղադրել կցորդիչներ, որոնցով կապահովվի հանրային համակցված հեռախոսային ցանցին համատեղելի սերտիֆիկացված վերջնակետային սարքերի օգտագործումը՝ հիմնական հեռախոսային և տվյալների հաղորդման ծառայություններից օգտվելու նպատակով:

3.18 Լիցենզավորված անձը պարտավոր է CDMA տեխնոլոգիայի կիրառմամբ ամրակցված հիմնական հեռախոսային ծառայությունները մատուցել հիմնական հեռախոսային ծառայությունների համար սահմանված սակագներով:

3.19 Լիցենզավորված անձը պարտավոր է ժամանակին և լրիվ վճարել «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգավորման պարտադիր վճարը:

4. Թույլատրված գործունեության վերահսկողությունը

4.1 Թույլտվության պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը՝ իր կողմից սահմանված կարգով:

4.2 Լիցենզավորված անձը վերահսկման իրականացման ընթացքում պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ Իրավասու մարմնին կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներին:

5. Պատժամիջոցներ

5.1 Լիցենզավորված անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում, Հանձնաժողովը իրավասու է կիրառել պատժամիջոցներ՝ այդ թվում տույժեր և տուգանքներ, ինչպես նաև կասեցնել կամ դադարեցնել Թույլտվությունը: Պատժամիջոցների կիրառման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

5.2 Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները ֆորս մաժորային հանգամանքների հետևանք են:

6. Թույլտվության պայմանների փոփոխություն

6.1 Լիցենզավորված անձի իրավական - կազմակերպական կամ ռադիոկապի կայանների տեղադրման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Լիցենզավորված անձը անհապաղ դիմում է

Հանձնաժողով՝ Թույլտվությունում փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

6.2 Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

6.3 Լիցենզավորված անձը 15-օրյա ժամկետում ծանուցագրով տեղեկացնում է Հանձնաժողովին իր գտնվելու վայրի փոփոխման, ինչպես նաև հիմնադիր փաստաթղթերում, տեղի ունեցած փոփոխությունների մասին:

7. Այլ պայմաններ

7.1 Լիցենզավորված անձը պարտավոր է ռադիոցանցի շինարարական մոնտաժային աշխատանքներն իրականացնել շինարարական նախագծի, ինչպես նաև տվյալ բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերի և իրավական ակտերի համապատասխան:

7.2 Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով :

8. Ծանուցում

8.1 Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Լիցենզավորված անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:

Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006
թվականի սեպտեմբերի 15-ի №202Ա որոշմամբ
հաստատված թույլտվության պայմանների

Ցուցակ
Հայաստանի Հանրապետության գյուղերի, որոնք մինչև 2006 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է ապահովված լինեն ռադիոծածկույթով

Մարզ	Շրջան	No	Բնակավայր
Արագածոտն	Արագած	1	Բերքառատ
		2	Դերեկ
		3	Գեղադիր
		4	Գեղարոտ
		5	Գեղաձոր
		6	Ալագյազ
		7	Ավշեն
		8	Ամրե թազա
		9	Ջամշլու
		10	Հնաբերդ
		11	Լեռնապար
		12	Սանգյառ
		13	Սիփան
		14	Ռյա թազա
		15	Վարդաբլուր
		16	Ծիլքար
		17	Մելիքգյուղ
		18	Միրաք
		19	Շենկանի
		20	Նորաշեն
		21	Օրթաճյա
Ընդամենը		**21**	
Արագածոտն	Ապարան	1	Ափնագյուղ

		2	Արագած
		3	Թթուջուր
		4	Ջրամբար
		5	Չքնաղ
		6	Հարթավան
		7	Սարալանջ
		8	Լուսագյուղ
		9	Վարդենուտ
		10	Վարդենիս
		11	Ծաղկաշեն
		12	Ձորագլուխ
		13	Քուչակ
		14	Մուլքի
		15	Երնջատափ
		16	Շենավան
		17	Նորաշեն
		18	Նիգավան
Ընդամենը		**18**	
Արագածոտն	Թալին	1	Բարոժ
		2	Գետափ
		3	Գառնահովիտ
		4	Գյալթո
		5	Ձարինջա
		6	Ավթոնա
		7	Թլիկ
		8	Հակկո
		9	Հացաշեն
		10	Սորիկ
		11	Սոսեր
		12	Լուսակն
		13	Վերին Սասունաշեն
		14	Ծաղկասար
		15	Ցամաքասար
		16	Ձորագյուղ
		17	Եղնիկ
		18	Շղարշիկ
		19	Նոր Արթիկ
Ընդամենը		**19**	
Արարատ	Արարատ	1	Դաշտաքար
		2	Գոռավան
		3	Ավշար
		4	Արալեզ
		5	Արարատ
		6	Արմաշ

		7	Այգավան
		8	Պարույր Սեւակ
		9	Ոսկետափ
		10	Ուրցաձոր
		11	Լանջանիստ
		12	Լուսառատ
		13	Լուսաշող
		14	Սուրենավան
		15	Սիսավան
		16	Վեդու գ/գ
		17	Տափերական
		18	Վանաշեն
		19	Փոկր Վեդի
		20	Երասխ
		21	Եղեգնավան
		22	Շաղափ
		23	Նոր ուղի
		24	Նոր կյանք
		25	Նոյակերտ
Ընդամենը		**25**	
Արարատ	Արտաշատ	1	Բերդիկ
		2	Բերքանուշ
		3	Բաղրամյան
		4	Բուրաստան
		5	Բյուրավան
		6	Դեղձուտ
		7	Դալար
		8	Դիտակ
		9	Դիմիտրով
		10	Դվին
		11	Գետազատ
		12	Աբովյան
		13	Ազատավան
		14	Արեւշատ
		15	Արաքսավան
		16	Այգեզարդ
		17	Այգեպատ
		18	Այգեստան
		19	Ոստան
		20	Ջրաշեն
		21	Հովտաշեն
		22	Հնաբերդ
		23	Լանջազատ

		24	Վերին Դվին
		25	Վերին Արտաշատ
		26	Վարդաշեն
		27	Կանաչուտ
		28	Մասիս
		29	Քաղցրաշեն
		30	Մխչյան
		31	Մրգավետ
		32	Մրգավան
		33	Մրգանուշ
		34	Շահումյան
		35	Նարեկ
		36	Նորաշեն
		37	Նշավան
Ընդամենը		**37**	
Արարատ	Մասիս	1	Դարբնիկ
		2	Դարակերտ
		3	Դաշտավան
		4	Գեղանիստ
		5	Զորակ
		6	Ազատաշեն
		7	Արեւաբույր
		8	Արբաթ
		9	Ջրահովիտ
		10	Հայանիստ
		11	Հովտաշատ
		12	Խաչփառ
		13	Սայաթ-Նովա
		14	Ռանչպար
		15	Սիփանիկ
		16	Սիս
		17	Մարմարաշեն
		18	Ղուկասավան
		19	Նոր Խարբերդ
		20	Նոր Կյուրին
		21	Նորաբաց
		22	Նորամարգ
		23	Նիզամի
Ընդամենը		**23**	
Արմավիր	Արմավիր	1	Բերքաշատ
		2	Բամբակաշատ
		3	Գետաշեն
		4	Զարթոնք

		5	Արևիկ
		6	Արգավանդ
		7	Արազափ
		8	Արաքս
		9	Արտաշար
		10	Արմավիր
		11	Այգեշատ
		12	Ամասիա
		13	Ժդանով
		14	Ջանֆիդա
		15	Ջրաշեն
		16	Հացիկ
		17	Հայկական
		18	Հոկտեմբեր
		19	Լենուղի
		20	Խանջյան
		21	Սովետական
		22	Լուկաշին
		23	Վարդանաշեն
		24	Տանձուտ
		25	Ձերժինսկի
		26	Մարգարա
		27	Մրգաշատ
		28	Երասխահուն
		29	Եղեգնուտ
		30	Փշատավան
		31	Շենավան
		32	Նալբանդյան
		33	Նոր Արտագես
		34	Նոր Արմավիր
		35	Նոր Կեսարիա
		36	Նորապատ
		37	Նորավան
Ընդամենը		**37**	
Արմավիր	Բաղրամյան	1	Դալարիկ
		2	Արեւադաշտ
		3	Արտամետ
		4	Հուշակերտ
		5	Լեռնագոգ
		6	Տալվորիկ
		7	Կողբավան
		8	Քարակերտ

		9	Մյասնիկյան
		10	Շենիկ
Ընդամենը		**10**	
Արմավիր	Էջմիածին	1	Բաղրամյան
		2	Դողս
		3	Գայ
		4	Գրիբոյեդով
		5	Ապագա
		6	Ակնաշեն
		7	Արեւաշատ
		8	Արաքս
		9	Աղավնատուն
		10	Ամբերդ
		11	Ջրարբի
		12	Պտղունք
		13	Հայկաշեն
		14	Լեռնամերձ
		15	Լուսագյուղ
		16	Մեծամոր
		17	Փարաքար
		18	Մուսալեռ
		19	Ֆերիկ
		20	Նորակերտ
Ընդամենը		**20**	
Գեղարքունիք	Վարդենիս	1	Դարանակ
		2	Գեղամաբակ
		3	Գեղամասար
		4	Գեղաքար
		5	Ազատ
		6	Ավազան
		7	Ակունք
		8	Արեգունի
		9	Արփունք
		10	Այրք
		11	Ջաղացաձոր
		12	Լճավան
		13	Խաչաղբյուր
		14	Լուսակունք
		15	Կախակն
		16	Կարճաղբյուր
		17	Վանևան
		18	Ծովակ

		19	Տորֆական
		20	Կութ
		21	Կուտական
		22	Տրետուկ
		23	Մեծ Մասրիկ
		24	Մաքենիս
		25	Փամբակ
		26	Փոքր Մասրիկ
		27	Շատջրեք
		28	Շատվան
		29	Ներքին Շորժա
		30	Նորաբակ
		31	Նորակերտ
Ընդամենը		**31**	
Գեղարքունիք	Գավառ	1	Բերդկունք
		2	Գանձակ
		3	Հայրավանք
		4	Լճափ
		5	Սարուխան
		6	Լանջաղբյուր
		7	Կարմիրգյուղ
		8	Ծաղկաշեն
		9	Ծովազարդ
		10	Նորատուս
Ընդամենը		**10**	
Կոտայք	Կոտայք	1	Գեղադիր
		2	Գեղաշեն
		3	Զովք
		4	Ակունք
		5	Արամուս
		6	Ջրաբեր
		7	Պտղնի
		8	Ողջաբերդ
		9	Վերին Պտղնի
		10	Կապուտան
		11	Կաթնաղբյուր
		12	Կամարիս
		13	Կոտայք

		14	Մայակովսկի
		15	Նոր գյուղ
Ընդամենը		**15**	
Կոտայք	Նաիրի	1	Զովունի
		2	Զորավան
		3	Քանաքեռավան
		4	Նոր Արտամետ
		5	Նոր Երզնկա
Ընդամենը		**5**	
Շիրակ	Ախուրյան	1	Բենիամին
		2	Բայանդուր
		3	Գետք
		4	Առափի
		5	Ախուրիկ
		6	Ախուրյան կայարանի
		7	Արևիկ
		8	Այգեբաց
		9	Ջաջուռ
		10	Ջաջուռ կայարան
		11	Ոսկեհասկ
		12	Ջրառատ
		13	Հացիկ
		14	Հայկավան
		15	Հովունի
		16	Հովիտ
		17	Լեռնուտ
		18	Կապս
		19	Կառնուտ
		20	Վահրամաբերդ
		21	Կարմրաքար
		22	Կամո
		23	Կրաշեն
		24	Քեթի
		25	Մեծ Սարիար
		26	Ղարիբջանյան
		27	Մարմաշեն
		28	Մայիսյան կայարանի
		29	Մուսայելյան
		30	Փոքրաշեն
		31	Երազգավորս
		32	Շիրակ

Ընդամենը		**32**	
Շիրակ	Ամասիա	1	Բերդաշեն
		2	Բանդիվան
		3	Դարիկ
		4	Գառնառիճ
		5	Գտաշեն
		6	Գյուլլիբուլաղ
		7	Զորակերտ
		8	Ալվար
		9	Արեգնադեմ
		10	Արդենիս
		11	Աղվորիկ
		12	Պաղակն
		13	Ջրաձոր
		14	Ողջի
		15	Հովտուն
		16	Հողմիկ
		17	Ծաղկուտ
		18	Կամխուտ
		19	Մեղրաշատ
		20	Շաղիկ
Ընդամենը		**20**	
Շիրակ	Աշոցք	1	Բավրա
		2	Գոգհովիտ
		3	Զույգաղբյուր
		4	Արփենի
		5	Թավշուտ
		6	Թորոսգյուղ
		7	Հարթաշեն
		8	Լեռնագյուղ
		9	Սալուտ
		10	Սարագյուղ
		11	Սիզավետ
		12	Վարդաղբյուր
		13	Կարմրավան
		14	Կրասար
		15	Մեծ Սեպասար
		16	Ղազանչի
		17	Ցողամարգ
		18	Մուսայելյան
		19	Փոքր Սեպասար
Ընդամենը		**19**	

Շիրակ	Անի	1	Բագրավան
		2	Գուսանագյուղ
		3	Աղին կայարանի
		4	Անի կայարան
		5	Անիպեմզա
		6	Իսահակյան
		7	Ջրափի
		8	Խարկով
		9	Լանջիկ
		10	Քարաբերդ
		11	Ձորակապ
		12	Ձիթհանքով
		13	Շիրակավան
Ընդամենը		**13**	
Շիրակ	Արթիկ	1	Գետափ
		2	Գեղանիստ
		3	Արևշատ
		4	Անուշավան
		5	Պեմզաշեն
		6	Հառիճ
		7	Հայկասար
		8	Հայրենյաց
		9	Հոռոմ
		10	Հովտաշեն
		11	Լեռնակերտ
		12	Սարալանջ
		13	Սպանդարյան
		14	Լուսակերտ
		15	Վարդաքար
		16	Տուֆաշեն
		17	Մեծ Մանթաշ
		18	Մեղրաշեն
		19	Փոքր Մանթաշ
		20	Նահապետավան
		21	Նոր Կյանք
Ընդամենը		**21**	
Ընդհանուրը: գյուղեր		**376**	